Թարգմանությունը՝ անգլերենից հայերեն կատարվել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից

Հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ Կուալա Լումպուրի հայտարարություն

Կուալա Լումպուր, 2013թ.հոկտեմբերի 21-22

2013թ. հոկտեմբերի 21-22-ին Հարավային, Արևելյան և Հարավ-արևելյան Ասիայի Հակակոռուպցիոն մարմինների, ինչպես նաև ազգային պլանավորման մարմինների բարձրաստիճան ներկայացուցիչները և ամբողջ աշխարհից ժամանած փորձագետները հավաքվել էին Կուալա Լումպուրում՝ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) և ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ (ՄԱԹՀԳ) հրավերով և Մալայզիայի կառավարության հետ համագործակցությամբ՝ քննարկելու Հակակոռուպցիոն ռազմավարությունների մի շարք ուղեցույցներ, որոնք կարող են ուղղորդել կայուն հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման, ձևավորման և իրականացման գործընթացը:

Մասնակիցների թվում էին հակակոռուպցիոն մարմինների մի շարք պաշտոնյաներ, հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող մասնագետներ, ազգային պլանավորման մարմինների, ինչպես նաև գործադիր, օրենսդիր ու դատական ճյուղերի ներկայացուցիչներ: ՄԱԶԾ, ՄԱԹՀԳ, Համաշխարհային Բանկի, Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ)/Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի հակակոռուպցիոն նախաձեռնության, Թրանսփարենսի Ինթերնեշնլի և U4 Հակակոռուպցիոն ռեսուրսների կենտրոնի ներկայացուցիչները ևս մասնակից եղան գործընթացներին:

Մասնակիցները վերանայեցին և քննարկեցին հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման գործընթացի, հակակառուպցիոն ռազմավարությունների նախագծման և բովանդակության և հակակոռուպցիոն ռազմավորությունների գնահատման ու մոնիթորինգի վերաբերյալ աշխարհի երկրների փորձերը՝ հատուկ շեշտադրում կատարելով Հարավային, Արևելյան և Հարավ-արևելյան Ասիայի վրա:

Հղում կատարելով ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիային (UNCAC)[1], որի 5-րդ և 6-րդ հոդվածներով մասնակից պետությունները պարտավորվում են իրենց իրավական համակարգերի հիմնարար սկզբունքներին համապատասխան մշակել ու իրականացնել կամ պահել արդյունավետ, համակարգված հակակոռուպցիոն քաղաքականություններ, որ կխթանեն հասարակության մասնակցությունը և կարտացոլեն օրենքի գերակայության, հանրային գործերի և հանրային սեփականության պատշաճ կառավարման, բարեխղճության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները,

Ընդունելով, որ հակակոռուպցիոն ռազմավարությունները կարող են ապահովել կոռուպցիայի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին ուղղված պետությունների կողմից ձեռնարկվելիք գործողությունների համապարփակ քաղաքականության շրջանակ, օգտակար գործիք կառավարությունների և այլ շահագրգիռ կողմերի կողմից ռեսուրսների և ջանքերի համախմբան ու

[1]Գլխավոր Ասամբլեայի 58/4 բանաձև, հավելված

համակարգման համար՝ ուղղված քաղաքականության մշակմանն ու իրականացմանը և այդ քաղաքականության իրականացման մոնիթորինգի ապահովմանը,

Հաշվի առնելով, որ Հարավային, Արևելյան և Հարավ-արևելյան Ասիայի մի շարք երկրներ իրականացրել են հակակոռուպցիոն ռազմավարություններ կամ գտնվում են նոր ռազմավարությունների նախագծման և հների վերանայման գործընթացում,

Ընդունելով, որ առկա են հակակոռուպցիոն ռազմավարությունների և քաղաքականությունների մշակման բազմաթիվ մոդելներ և մոտեցումներ և տարածաշրջանում այս ռազմավարությունների մշակման փորձերից քաղվող ընդհանուր դասեր,

Մասնակիցները.

1. Խորհուրդ են տալիս հետևյալը.

Հակակոռուպցիոն Ռազմավարության մշակման գործընթաց

- **ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ.** Պետությունները պետք է հաշվի առնեն իրենց որոշակի քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային համատեքստը իրենց հակակոռուպցիոն ռազմավարությունների նախագծման ժամանակ:
- **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔ.** Արդյունավետ հակակոռուպցիոն ռազմավարության մշակման գործընթացի անհրաժեշտ պայմաններից է հավատարիմ քաղաքական ղեկավարությունը, մասնավորապես պետության բարձրագույն մակարդակներում, և անհրաժեշտ ռեսուրսներ մոբիլիզացնելուն և ընդհանուր գործընթացը վարելուն ուղղված ավելի լայն քաղաքական աջակցությունը:
- **ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ (ՆԵՐԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ) ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ.** Շահագրգիռ կողմերի լայն ներգրավվածությունը իրավունքի հիմունքներ է ստեղծում և օգնում է ապահովել որդեգրված ռազմավարությունների ընդունելիությունն և արդյունավետությունը: Պետական կառույցները (գործադիր, օրենսդիր և դատական) պետական և ենթա-պետական մակարդակներում, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, մասնավոր սեկտորը, մեդիան, մասնագիտական հանրությունները, առևտրային և արդյունաբերական միավորումները և արհմիությունները, ակադեմիական հաստատությունները, երիտասարդական և մշակութային կազմակերպությունները կարող են ծառայել որպես կարևոր դաշնակիցներ և գործընկերներ հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման գործում և կարող են կրճատել բարեփոխումներին ուղղված ջանքերի խոցելիությունը քաղաքական ղեկավարությունում փոփոխությունների հանդեպ:
- **ՊԱՐԶ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿ ԳՈՐԾԸՆԹԱՑ.** Ռազմավարությունների մշակման գործընթացը պետք է ի սկզբանե լինի պարզ և թափանցիկ:
- **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԼԱԿԱՆ.** Համաձայնություն պետք է ստեղծվի ռազմավարությունների ընդհանուր տեսլականի և նպատակների շուրջ:
- **ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ.** Հակակոռուպցիոն ռազմավարությունները մշակման գործընթացի շրջանում, ինչպես նաև իրականացման ու մոնիթորինգի փուլերումպետք է

կենտրոնացնեն իրենց ուշադրությունը գործակալությունների ներսում և նրանց միջև համակարգումն ընդլայնելու վրա:

- **ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔԱՅԻՆ ՀԵՆՔ.** Ռազմավարությունների մշակումը, իրականացումը և մոնիթորինգը պետք է հիմնվեն հակակոռուպցիոն քաղաքականությունների և հաստատությունների ոլորտում հուսալի ախտորոշման, կարիքների և ռիսկերի, խոցելի շրջանների և բացթողումների մասին վկայության վրա:
- **ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ և ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՈՒՄ.** Ռազմավարությունների մշակումը պետք է ինստիտուցիոնալացվի՝ ապահովելու համար ռազմավարությունների շարունակական համապատասխանությունը և ժամանակին փոփոխումը:
- **ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ.** Անհրաժեշտ ռեսուրսները պետք է հավաքագրվեն ռազմավարությունների մշակման փուլում, որպեսզի ապահովեն ռազմավարությունների արդյունավետ իրականացումը և մոնիթորինգը:
- **ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ.** Հակակոռուպցիոն և Ազգային պլանավորման մարմինները պետք է հաղորդակցվեն և շփվեն հասարակության հետ կանոնավոր կերպով, որպեսզի ապահովեն հանրային վստահությունը և ստանան մեկնաբանություններ հակակոռուպցիոն ռազմավարությունների արդյունավետ իրականացման համար:

Հակակոռուպցիոն նախագծում և բովանդակություն

- **ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ՀԻՄՆԱՐԱՐ ԵՎ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ.** Հիմնարար նպատակները և հիմնավորումները միջամտությունների համար պետք է սահմանվեն ազգային առաջնահերությունների հիման վրա, ինչպես նաև բացերն ու կարիքները պետք է նախանշվեն:
- **ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՎԵԼԻ ԼԱՅՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ.** Հակակոռուպցիոն ռազմավարությունները պետք է ներառնվեն այս պահին ուշադրության կենտրոնում գտնվող ավելի լայն ազգային զարգացման նախաձեռնությունների շրջանակներում և պետք է հաշվի առնեն միջազգային/տարածաշրջանային պարտավորությունները:
- **ԱՅԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ/ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԵՋ ԻՆՏԵԳՐՈՒՄ.** Հակակոռուպցիոն ռազմավարությունները պետք է հաշվի առնեն և կապեր հաստատեն այլ համապատասխան պետական ծրագրերի հետ (օր.՝ դատական ոլորտի, հանրային կառավարման բարեփոխումներ, բաց կառավարություն և այլն) և պետք է փորձեն համագործակցություն հաստատել այլ գործակալությունների հետ:
- **ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ.** Հակակոռուպցիոն ռազմավարությունները պետք է կազմակերպվեն համընդհանուր ամբողջական մոտեցմամբ՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով ոլորտին հատուկ անհրաժեշտությունները:
- **ՊԱՐԶ ԵՎ ՀԱՍԿԱՆԱԼԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ.** Ռազմավարությունները պետք է լինեն պարզ, հակիրճ և հեշտ ընկալելի:
- **ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՆԱԽԱԳԾՈՒՄ.** Չնայած գոյություն չունի պարզ բանաձև հակակոռուպցիոն ռազմավարությունների պատշաճ նախագծման, բովանդակության կամ իրականացման համար, UNCAC-ը կարող է օգտագործվել որպես հակակոռուպցիոն

ռազմավարությունների շրջանակ՝ հաշվի առնելով համապատասխան տվյալները, որոշակի կարիքները և ազգային կարողությունները:

- **ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ.** Ռազմավարությունները պետք է լինեն իրատեսական այն հարցում, թե ինչն է հասանելի կարճ, միջին և երկար ժամկետներում, սահմանեն պարզ առաջնահերթություններ և դրանց հիման վրա սահմանեն գործողությունների հերթականությունը: Ռազմավարությունները պետք է նախագծվեն ղեկավարության վստահելիությունը ընդլայնելու և բարեփոխումների հանդեպ պետական հավատարմությունն ամրապնդող շոշափելի արդյունքների արագ ձեռքբերումն ապահովելու նպատակով:
- **ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ.** Պարտադիր է, որ ռազմավարությունները սահմանեն իրականացման մեխանիզմ՝ գործողությունների պլանի տեսքով, որը հստակորեն սահմանում է արդյունքների վրա կենտրոնացած իրագործմանն ուղղված պարտականությունները և ժամկետները: Ռազմավարությունների իրականացումը համակարգող գործակալությունը պետք է լինի բարձրաստիճան կառավարական կազմակերպությունների մեջ:
- **ԵՆԹԱ-ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ.** Որտեղ հնարավոր է, հատուկ ուշադրություն պետք է դարձնել ենթա-պետական և տեղական մակարդակներում ռազմավարությունների իրականացմանը:
- **ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ (ԿԱՐԻՔՆԵՐԸ և ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ).** Ռազմավարությունները պետք է ապահովեն իրենց ինստիտուցիոնալ և ֆինանսական կայունությունը և հաշվի առնեն իրականացման կարողությունները:

Հակակոռուպցիոն Ռազմավարության Մոնիթորինգ և Գնահատում

- **ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ.** Մոնիթորինգի և գնահատման մեխանիզմները ազգային հակակոռուպցիոն ռազմավարությունների անբաժանելի մասն են: Գնահատման տարրերը և տվյալների հավաքման համակարգերը պետք է ներառնվեն ռազմավարությունների մեջ հենց նախագծման փուլում:
- **ՀՍՏԱԿ ՀԵՆԱԿԵՏԵՐՈՎ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐՈՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ.** Հստակ սահմանված հենակետերով և դրանց հետևելու մեխանիզմներով չափելի ցուցանիշներ են անհրաժեշտ՝ սահմանելու համար թիրախային նպատակների նվաճումը:
- **ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ.** Արդյունավետ մոնիթորինգի և գնահատման համար անհրաժեշտ են վստահելի տվյալներ, որ գեներացվում են բազմաթիվ աղբյուրների հիման վրա:
- **ԿԱՆՈՆԱՎՈՐ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ.** Կանոնավոր մոնիթորինգը և գնահատումը թույլ են տալիս, որ իշխանությունները չափեն իրականացման առաջընթացը և կոռուպցիան սանձահարելու գործում արդյունքների ձեռքբերումը:
- **ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԸՆԴԴԵՄ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ.** Կարևոր է տարբերակել ծրագրի կառավարման մոնիթորինգը (գործողություններ/արդյունքներ) ընդդեմ գնահատման (արդյունքներ/ազդեցություն) և իրագործման պարտավորությունները ընդդեմ մոնիթորինգային և վերահսկողության պարտավորությունների:

- **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ.** Պետական մարմնին/մարմիններին պետք է վստահել մոնիթորինգի, իրագործման և կանոնավոր զեկուցումների պատասխանատվությունը և նրանք պետք է ապահովվեն կայուն ինստիտուցիոնալ և ֆինանսական աջակցությամբ: Անկախ գնահատումը պետք է ապահովի մանիթորինգն ու զեկուցումները կանոնավոր պարբերականությամբ:

2. Խրախուսում են Հակակոռուպցիոն և Ազգային պլանավորման մարմիններին սահմանված ժամկետներում խթանել այս առաջարկությունները իրենց համապատասխան գործակալություններում, երկրներում և տարածաշրջանային/միջազգային ցանցերում:
3. Կոչ են անում Հակակոռուպցիոն և Ազգային պլանավորման մարմիններին խթանել այս առաջարկությունները, որպեսզի աջակցեն գործադիր, օրենսդիր և դատական մարմինների և ընդհանուր առմամբ հասարակության ներկայացուցիչներին՝ ավելի լավ հասկանալու և աջակցելու հակակոռուպցիոն ռազմավարություններին դրանց մշակման, նախագծման և իրականացման ու մոնիթորինգի ընթացքում:
4. Ողջունում են հյուրընկալող պետության հավատարմությունը այս առաջարկությունները UNCAC-ի անդամ-պետությունների 5-րդ Համաժողովի ժամանակ բարձրացնելու հարցում և խրախուսում են, որ մյուս մասնակից պետությունները ևս աջակցեն այս նախաձեռնությանը:
5. Արտահայտում են իրենց բարձրգնահատականնուերախտագիտությունը Մալայզիայի կառավարությանը՝ ՄԱԶԾ և ՄԱԹՀԳ կողմից կազմակերպվող Հակակոռուպցիոն Ռազմավարությունների վերաբերյալ Ասիայի տարածաշրջանային հանդիպումը հյուրընկալելու համար՝ քննարկելու և խթանելու այս առաջարկությունները հակակոռուպցիոն ռազմավարությունների համար: